

## ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՋ

### Արտակ Ասատրյան

*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների, զինհաշմանդամների, զինվորական կենսաթոշակառուների սոցիալական իրավունքների հետ կապված հարցերը մշտապես գտնվել են պետական քաղաքականության առաջնահերթությունների ցանկում: Դեռևս 1992 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը, որն օրենքի շահառուների սոցիալական և առողջապահական իրավունքների ամրագրման տեսանկյունից առաջին կարևոր քայլն էր: Այնուհետև, 1998 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովի ընդունած նույնանուն օրենքով ընդլայնվեցին զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների խնդրո առարկա իրավունքները: Հատկապես այս օրենքի հիման վրա ընդունվեցին բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր, որոնք միտված էին այդ իրավունքների պատշաճ իրացման համար անհրաժեշտ կառուցակարգերի ձևավորմանը: Ընդ որում, մինչև ուժը կորցնելը (2017թ.) օրենքում բազմաթիվ փոփոխություններ և լրացումներ են կատարվել՝ հաշվի առնելով զինվորական ծառայության զարգացման դինամիկան և ոլորտի առջև ծառայած խնդիրները:

Քննարկվող ոլորտը կանոնակարգող գործող հիմնական օրենսդրական ակտը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքն է (այսուհետ նաև՝ Օրենք), որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 15-ին:

Սույն հոդվածի շրջանակներում զինծառայողների սոցիալական երաշխիքների ցանկից կանդրադառնանք զինծառայողների ծառայության վայրում բնակարանային պայմանների բարելավման հարցերին:

Այսպես, Օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայողները ծառայության վայրում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում ապահովվում են ծառայողական բնակարաններով՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով: Ծառայության վայրում բնակարանային պայմանների բարելավման կարիք է համարվում ծառայության վայրի վարչական տարածքից առնվազն 30 կիլոմետր հեռավորությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ նույն հեռավորությամբ մշտական (փաստացի) հաշվառման վայր չունենալը: Ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց պայմանագրային զինծառայողներին վճարվում է դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով: Պայմանագրային զինծառայողին ծառայողական բնակելի տարածությամբ ապահովելիս կամ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում վճարելիս հաշվի են առնվում նաև նրա ընտանիքի հետևյալ անդամները.

- 1) անուսինը (կինը) և 18 տարին չլրացած երեխաները.
- 2) համատեղ բնակվող՝ անգործունակ ձանաչված կամ մինչև 26 տարեկան ուսանող զավակները, ինչպես նաև համատեղ բնակվող՝ 18 տարեկան և դրանից

բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող զավակները, եթե հաշմանդամություն ունեցող են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը:

Նշված դրույթների առնչությամբ ունենք որոշ դիտարկումներ: Մասնավորապես, Օրենքում օգտագործվում է «ծառայության վայրի վարչական տարածք» արտահայտությունը, որը որոշակիության տեսանկյունից հարցեր է առաջ բերում: Ինչ պետք է հասկանալ «ծառայության վայրի վարչական տարածք» ասելով: Արդյո՞ք նկատի ունենք այն քաղաքը, գյուղը, բնակավայրը, որտեղ ծառայում է պայմանագրային զինծառայողը: «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի<sup>1</sup> 1-ին հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները: Համայնքը կարող է ընդգրկել մեկ կամ ավելի թվով բնակավայրեր: Մեկից ավելի բնակավայրերից բաղկացած համայնքը կոչվում է բազմաբնակավայր համայնք:

Կարծում ենք Օրենքում օգտագործվող արտահայտությունը հստակեցման կարիք ունի, քանի որ այն կարևոր է ծառայության վայրից 30 կիլոմետրից ավելի տարածությունը ճշգրիտ հաշվարկելու և զինծառայողին ծառայողական բնակարանով ապահովելու, իսկ այդպիսի հնարավորության բացակայության դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելու համար:

Օրենքը որպես ծառայության վայրում բնակարանային պայմանների բարելավման կարիք դիտարկում է ծառայության վայրի վարչական տարածքից առնվազն 30 կիլոմետր հեռավորությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ նույն հեռավորությամբ *մշտական (փաստացի) հաշվառման վայր չունենալը* (ընդգծումը մերն է): Այս առումով հարկ է նշել, որ Օրենքում կիրառվող ձևակերպումները ներդաշնակ չեն անձի հաշվառման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտի՝ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի<sup>2</sup> կարգավորումների հետ: Այսպես, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը ռեգիստրի ստեղծման ու վարման հիմնական սկզբունքների շարքում առանձնացնում է մշտական բնակության միայն մեկ վայրում բնակչի հաշվառումը, իսկ նույն օրենքի 5-րդ հոդվածը ռեգիստրում մշակվող բնակչի անձնական տվյալների շարքում նշում է բնակչի մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն: Այսինքն, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքում չի օգտագործվում ո՛չ *մշտական հաշվառման վայր* և ո՛չ էլ *փաստացի հաշվառման վայր* ձևակերպումները: Հետևաբար, Օրենքի ձևակերպումները անհրաժեշտ է համապատասխանեցնել «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի ձևակերպումներին:

Իհարկե, Օրենքի կիրառության տեսանկյունից կարևորություն կարող է ձեռք բերել զինծառայողի փաստացի բնակության վայրը, սակայն խնդիրը զուտ իրավական տեսանկյունից դիտարկելիս հարց է առաջանում, թե ով պետք է հավաստի զինծառայողի փաստացի բնակության վայրը, ինչ փաստաթղթով պետք է այն հաստատվի: Բանն այն է, որ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն. «Մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս անձը պարտավոր է յոթնօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել այն համայնքի տեղական ռեգիստրին, որտեղ գտնվում է նրա նոր կացարանը: Բնակիչը կարող է հաշվառվել միայն մեկ կացարանում»: Ավելին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի<sup>3</sup> 195.1 հոդվածի 2-րդ մասը վարչական պատասխանատվություն է նախատեսում բնակչության պետական ռեգիստրում ընդգրկվելու համար Հայաստանի Հանրապետության բնակչի, ինչպես նաև 16 տարին չլրացած

<sup>1</sup> ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1995 թվականի նոյեմբերի 7-ին:

<sup>2</sup> ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի սեպտեմբերի 24-ին:

<sup>3</sup> ՀՆՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին:

կամ դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձի օրինական ներկայացուցչի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան տեղական ռեգիստրին մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն, ինչպես նաև օրենքով պահանջվող այլ անհատական հաշվառման տվյալները չտրամադրելու կամ կեղծ տվյալներ տրամադրելու կամ մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս նոր բնակության վայրի (կացարանի) հասցեն օրենքով սահմանված ժամկետում չհայտնելու համար: Մեր կողմից կատարված դիտարկումները ցույց տվեցին, որ նշված հարաբերությունների մասով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի կիրառության մակարդակը բավական ցածր է: Մինևույն ժամանակ գործնականում խնդիրներից խուսափելու համար, կարծում ենք, որ վերոգրյալ իրավական ակտերի կարգավորումները պետք է ներդաշնակեցվեն:

Օրենքի 65-րդ հոդվածի հիման վրա ՀՀ կառավարությունը 2018 թվականի նոյեմբերի 22-ին ընդունել է «Պայմանագրային զինծառայողին ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցում վճարելու կարգը և չափերը սահմանելու մասին» N 1321-Ն որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում):

Որոշման 2-րդ կետը սահմանում է, որ պայմանագրային զինծառայողին ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցում վճարվում է վարձակալության մասին պայմանագրում նախատեսված չափով, սակայն ոչ ավելի, քան՝

1) Երևան քաղաքում՝ մինչև 4 անձից բաղկացած շահառու ընտանիքին՝ 65000 դրամ, իսկ 4 և ավելի անձանցից բաղկացած շահառու ընտանիքին՝ 85000 դրամ:

2) այլ քաղաքներում՝ մինչև 4 անձից բաղկացած շահառու ընտանիքին՝ 38000 դրամ, իսկ 4 և ավելի անձանցից բաղկացած շահառու ընտանիքին՝ 50000 դրամ:

3) այլ բնակավայրերում՝ մինչև 4 անձից բաղկացած շահառու ընտանիքին՝ 20000 դրամ, իսկ 4 և ավելի անձանցից բաղկացած շահառու ընտանիքին՝ 25000 դրամ:

Նախ, նշենք, որ համայնքների խոշորացման համատեքստում Որոշումը վերանայման կարիք ունի, քանի որ բազմաթիվ նախկին գյուղական համայնքներ ներկայումս ներառվել են խոշորացված համայնքների մեջ, և այս առումով Որոշման ձևակերպումները չեն համապատասխանում արդի իրողություններին, ինչը կարևոր կլինի նաև Որոշման ճիշտ կիրառման համար:

Բացի այդ, ըմբռնումով մոտենալով այն հանգամանքին, որ Որոշմամբ բավական մեծ ֆինանսական բեռ է դրված պետության վրա, և վարձակալած տարածքների դիմաց վճարի փոխհատուցումը արդեն իսկ դրական քայլ է պետության կողմից, այնուամենայնիվ, որոշմամբ սահմանված փոխհատուցման չափերը համարժեք չեն անշարժ գույքի շուկայի ժամանակակից գներին: Այսպես, մեր կողմից կատարված դիտարկումները ցույց տվեցին, որ իրատեսական չէ Երևան քաղաքում 65.000 ՀՀ դրամի կամ 85.000 ՀՀ դրամի շրջանակներում բնակելի տարածք վարձակալել: Ինչ վերաբերում է այլ քաղաքներին, ապա այս մասով ևս, կարծես, որոշման կարգավորումները խնդրահարույց են: Մասնավորապես, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության տարբեր քաղաքներում բնակելի տարածքների վարձակալության շուկայական գները, հարկ է փաստել, որ դրանք խիստ տարբեր են: Այսպես, Գյումրիում և Վանաձորում բնակելի տարածքների վարձակալության գները էականորեն տարբերվում են, օրինակ, Ճամբարակում բնակելի տարածքների վարձակալության գներին:

Վերանայման կարիք ունի նաև Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետը, քանի որ ընտրված ձևակերպումը (այլ բնակավայրեր) տեղին չէ: Սակայն այս խնդրի վրա հատուկ կանգ չենք առնի՝ նկատի ունենալով, որ արդեն վերևում նշել են, որ Որո-

շումը համայնքների խոշորացման գործընթացի համատեքստում վերանայման կարիք ունի:

Ստորև անդրադառնանք Որոշման հավելվածով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) ուսումնասիրության արդյունքում վեր հանված խնդիրներին:

Այսպես, Կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշվում է, որ դրա գործողությունը տարածվում է նաև պաշտպանության նախարարությունում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վրա: Ընդ որում, Կարգի սկզբնական տեքստում պաշտպանության նախարարությունում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք որպես այս կարգի շահառուներ նշված չեն եղել, ինչը հետագայում լրացվել է ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 29-ի N 1114-Ն որոշմամբ: Այս առումով հարկ է նշել, որ իհարկե ողջունելի է, որ ՀՀ կառավարությունն ընդլայնել է շահառուների շրջանակը, սակայն իրավական տեսանկյունից այն խոցելի է, քանի որ Օրենքը կառավարությանը պաշտպանության նախարարությունում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց մասով նման որոշում ընդունելու լիազորություն չի վերապահել: Այստեղ տեղին կլինի մեջբերել նաև ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

Պաշտպանության նախարարությունում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք իրենց կարգավիճակով տարբերվում են զինծառայողներից և նրանց հավասարեցված անձանցից, հետևաբար տեղին կլինի, որ նախ օրենքում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց մասով լրացում կատարվեր, այնուհետև՝ որոշման մեջ:

Կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում որպես զինծառայողի ընտանիքի անդամ նշվում է վերջինիս մինչև 23 տարեկան ուսանող զավակը, ինչը հակասում է Օրենքի ձևակերպմանը, քանի որ Օրենքում կատարված փոփոխության արդյունքում զինծառայողի ընտանիքի անդամ ուսանող զավակի տարիքը փոխվել է մինչև 26 տարեկանը, հետևաբար Կարգում ևս անհրաժեշտ է այս մասով փոփոխություն կատարել:

Կարգի 4-րդ կետում օգտագործվող հասկացությունները, ինչպես արդեն Օրենքի առնչությամբ նշեցինք, համահունչ չեն ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի կարգավորումներին: Մասնավորապես, նշված կետում օգտագործվող «վարչատարածքային միավոր (համայնք)» հասկացությունը տարբերվում է Օրենքում օգտագործվող «վարչական տարածք» հասկացությունից, որն էլ իր հերթին, ինչպես արդեն նշեցինք, հակասում է «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի ձևակերպումներին: Նույն կերպ, Կարգում օգտագործվող «շահառուի մշտական բնակության հաշվառման վայր» հասկացությունը տարբերվում է Օրենքում օգտագործվող ձևակերպումից, ինչ էլ իր հերթին տարբերվում է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի կարգավորումներից: Այս մասով ևս իրավական ակտերի հասկացությունները միասնականացման կարիք ունեն:

Հետաքրքիր է, որ Կարգի 4-րդ կետի կարգավորումները զինծառայողի ծառայության և բնակության վայրերի միջև հեռավորության հաշվարկման մասով ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի N 755-Ն որոշմամբ փոփոխության են ենթարկվել և հարաբերականորեն համապատասխանեցվել են համայնքների խոշորացման տրամաբանությանը: Սակայն, նախ, անհրաժեշտ էր այդ փոփոխությունը կատարել Օրենքում, ապա դրանից բխող ենթաօրենսդրական նորմատիվ ակտերում: Այս մասով Օրենքի փոփոխության անհրաժեշտությանը վերևում արդեն անդրադարձել ենք:

Նշված հասկացությունների խնդիրը առկա է նաև Կարգի այլ կետերում,

հետևաբար դրանց առանձին չենք անդրադառնա:

Կարգի 5-րդ կետը սահմանում է, որ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալու իրավունքից չի օգտվում այն շահառուն...: Այս առումով զուտ ձևակերպման տեսանկյունից խնդրահարույց է «շահառու» եզրույթի օգտագործումը այս կետում, քանի որ, եթե շահառու է, ապա նշանակում է, որ օգտվում է Կարգով նախատեսված վարձակալած բնակելի տարածության դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքից: Տրամաբանական կլիներ, եթե նշված կետում «շահառու» եզրույթի փոխարեն օգտագործվեր «զինծառայող» եզրույթը:

Կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալու իրավունքից չի օգտվում այն շահառունով սույն կետի 1-ին ենթակետի շրջանակներում ծառայության ընթացքում փոխել է մշտական բնակության հաշվառման վայրը կամ օտարել է սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակելի տարածությունը: Այս առումով հարկ է նշել, որ Կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետում խոսվում է ծառայության վայրի մասին, ինչը տրամաբանական կապ չունի ծառայության ընթացքի հետ, և, այո, զինծառայողը ծառայության բերումով կարող է և հաճախ ստիպված է փոխել մշտական բնակության հասցեն: Սրա արդյունքում, ինչպես արդեն վերևում նշեցինք, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի համաձայն, անձը պարտավոր է յոթնօրյա ժամկետում տեղական ռեգիստրին տեղեկացնել մշտական բնակության վայրի փոփոխության մասին: Ստացվում է փակ շրջան: Զինծառայողը տեղափոխվում է մեկ այլ վայր բնակության հենց ծառայության բերումով, բարեխղճորեն կատարելով օրենքի պահանջը, փոխելով բնակության հասցեն՝ տեղեկացնում է տեղական ռեգիստրին իր նոր բնակության հասցեի մասին և արդյունքում զրկվում հետագայում վարձակալած բնակելի տարածության վճարի փոխհատուցում ստանալու իրավունքից: Կարծում ենք, որ Կարգում բացառություն պետք է նախատեսվի, երբ զինծառայողը մշտական բնակության վայրի հասցեն փոխել է ծառայության բերումով:

Ինչ վերաբերում է ծառայության ընթացքում սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակելի տարածությունը օտարելուն, ապա, կարծում ենք, որ այս մասով ևս Կարգը վերանայման անհրաժեշտություն ունի: Մասնավորապես, եթե փորձենք զուգահեռներ տանել բնակարանային պայմանների բարելավման իրավունքի հետ, ապա այս մասով իրավունքը ծագում է սեփականության իրավունքով զինծառայողին պատկանող բնակելի տարածությունը օտարելուց 5 տարի հետո: Ինչու՞ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցում վճարելու դեպքում չի կարող գործել այս կանոնը, որքանով է այս սահմանափակումը արդարացի, մասնավորապես եթե ընդունենք, որ զինծառայողը հնարավոր է, որ բնակելի տարածությունն օտարած լինի սոցիալական ծանր դրությունից կամ կարիքից դրդված:

Կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալու իրավունքից չի օգտվում այն շահառուն, ով բնակելի տարածության վարձակալության մասին պայմանագիրը կնքել է ամուսնու (կնոջ) կամ իր կամ ամուսնու (կնոջ) ծնողի, զավակի, քրոջ կամ եղբոր հետ: Անհասկանալի է նման սահմանափակումը: Ինչու՞ չպետք է զինծառայողը իր կամ իր ամուսնու (կնոջ) ծնողի, զավակի, քրոջ կամ եղբոր հետ պայմանագիր կնքելու հնարավորություն ունենա: Սա արհեստականորեն կարող է բերել կեղծիքների: Բացի այդ, ինչպես պետք է պարզվի, որ, օրինակ, պայմանագիրը կնքվել է իր կնոջ քրոջ կամ եղբոր հետ: Եթե զինծառայողը վարձակալած բնակելի տարածության դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունի, և նշված անձինք էլ ունենան բնակելի տարածություն, որը կարող են տրամադրել իրենց ազգական զինծառայողին, ով առավել խնամքով կօգտագործի բնակելի տարածու-

յունը, ինչո՞ւ գրկել նրանց այս հնարավորությունից: Եթե պետությունից զինծառայողը փոխհատուցում ստանալու իրավունք ունի, ապա հասկանալի է, որ ոչ մի շահագրգռվածություն չի ունենա ո՛չ զինծառայողը, ո՛չ էլ առավել ևս իր ազգականը վերջինիս պատկանող բնակելի տարածությունը անհատույց օգտագործելու համար: Կարծում ենք՝ այս սահմանափակումը պետք է հանվի:

Կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետում նշվում է, որ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալու նպատակով շահառուն, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացնում է իր և վարձակալված բնակելի տարածությունում իր հետ համատեղ բնակվող չափահաս անձանց անձնագրերի պատճենները՝ հաշվառման էջով, ամուսնության վկայականի և անչափահաս անձանց ծննդյան վկայականների պատճենները, իսկ անձնագրի փոխարեն նույնականացման քարտ ներկայացվելու դեպքում՝ բնակչության պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանման կողմից տրված տեղեկանք անձի հաշվառման մասին: Գործնականում խնդիրներից խուսափելու նպատակով առաջարկում ենք քննարկվող ենթակետում «նրա հետ համատեղ բնակվող չափահաս անձանց» բառերը փոխարինել «նրա հետ համատեղ բնակվող ընտանիքի չափահաս անձանց» բառերով, իսկ նույն ենթակետում «անձնագրի փոխարեն նույնականացման քարտ» բառերը փոխարինել «անձնագրի փոխարեն նույնականացման քարտ կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ» բառերով՝ նկատի ունենալով, որ ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի «Անձը հաստատող փաստաթղթի մասին» N 767 որոշման համաձայն՝ անձը հաստատող փաստաթղթերի ցանկն ավելի ընդգրկում է:

Կարգի 11-րդ կետում նշվում է, որ կարգի 9-րդ կետով նախատեսված փաստաթղթերը թերի ներկայացվելու դեպքում շահառուին գրավոր առաջարկվում է 15-օրյա ժամկետում լրացնել անհրաժեշտ փաստաթղթերը, իսկ նշված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացվելու դեպքում դիմումը վերադարձվում է: Անորոշ է մնում, թե փաստաթղթերը թերի ներկայացվելու դեպքում քանի օրվա ընթացքում է զինծառայողին առաջարկվում լրացնել անհրաժեշտ փաստաթղթերը: Այս մասով ցանկալի կլիներ հստակեցնել ժամկետները առավել որոշակի և հնարավոր սեղմ ժամկետներում գործընթացը կազմակերպելու համար:

Կարգի 12-րդ կետը սահմանում է, որ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցումը վճարվում է նոտարական կարգով հաստատված կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1851-Ն որոշմամբ նախատեսված օրինակելի ձևով կնքված պայմանագրում նշված օրվանից, սակայն ոչ ավելի, քան սույն կարգով սահմանված պահանջները բավարարող շահառուի դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը զորամասում մուտքագրվելու ամսվա 1-ից սկսած՝ շահառուի հաշվեհամարին յուրաքանչյուր ամսվա համար անկանխիկ փոխանցում կատարելու միջոցով: Այս մասով առաջարկում ենք որպես վճարման օրվա մեկնարկ դիտարկել զինծառայողին համապատասխան զորամասում ծառայության նշանակելու հրամանի օրը, քանի որ Կարգում նշված նոտարական կարգով հաստատված կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1851-Ն որոշմամբ նախատեսված օրինակելի ձևով կնքված պայմանագիրը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ինչ-ինչ պատճառներով (երբեմն նաև զինծառայողի կամքից անկախ) հնարավոր չլինեն զորամաս ներկայացնել սեղմ ժամկետում:

Կարգի 16-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալու իրավունքը դադարեցվում է զորամասի հրամանատարի նախաձեռնությամբ՝ օտարերկրյա պետություն ուսման կամ ծառայության գործուղվելու հիման վրա շահառուին՝ օրենքով սահմանված կարգով կադրերի տրամադրության տակ թողնելու դեպքում, եթե շահառուն չունի ընտանիք, կամ շահառուի հետ օտարերկրյա պե-

տություն է մեկնում նաև նրա ընտանիքը: Հարկ է նշել, սակայն, որ Կարգը չի տալիս այն հարցի պատասխանը, թե արդյոք վարձակալության դիմաց դրամական փոխհատուցման իրավունքը պահպանվում է այն դեպքում, երբ զինծառայողը գործուղվում է օտարերկրյա պետություն ուսման կամ ծառայության, և ընտանիքի անդամների մի մասը նրա հետ տեղափոխվում է օտարերկրյա պետություն, իսկ մյուս մասը, օրինակ, ուսանող զավակ(ներ)ը մնում են Հայաստանի Հանրապետությունում ուսումը շարունակելու նպատակով:

Նկատի ունենալով վերոգրյալը և գործնականում զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման կամ ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելու գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով՝ առաջարկում ենք սույն հոդվածում կատարված վերլուծությունների, դիտարկումների և արված առաջարկների շրջանակներում լրամշակել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի «Պայմանագրային զինծառայողին ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցում վճարելու կարգը և չափերը սահմանելու մասին» N 1321-Ն որոշման վերաբերելի դրույթները:

## К НЕКОТОРЫМ ВОПРОСАМ УЛУЧШЕНИЯ ЖИЛИЩНЫХ УСЛОВИЙ ВОЕННОСЛУЖАЩИХ

**Артак Асатрян**

*ИО заведующего кафедрой Европейского и международного права ЕГУ,  
кандидат юридических наук, доцент*

В связи с началом Нагорно-Карабахского конфликта и последующими войнами вопросы, связанные с социальными правами военнослужащих и членов их семей, военных инвалидов и военных пенсионеров, приобрели большое значение и всегда находились под опекой государства.

В статье рассматриваются вопросы, связанные с улучшением жилищных условий военнослужащих, а также предоставлением компенсации за аренду жилой площади вне места постоянного жительства. В частности, обсуждались критерии, на основании которых оценивается необходимость улучшения жилищных условий по месту службы, отдельные категории членов семьи военнослужащего, которые учитываются при предоставлении военнослужащему жилой площади или выплате денежной компенсации за аренду жилой площади. Кроме того, в случае непредоставления военнослужащему квартиры по месту службы изучались размеры денежной компенсации за аренду жилой площади в Ереване и районах Республики Армения в зависимости от состава семьи.

В результате анализа выделены недостатки, пробелы и противоречия в нормативно-правовых актах, регулирующих рассматриваемые отношения, и даны соответствующие рекомендации по их устранению, доработке и дальнейшему совершенствованию.

## ON SOME ISSUES OF IMPROVING HOUSING CONDITIONS OF SERVICEMEN

**Artak Asatryan**

*Acting Head at YSU Chair of European and International Law,  
Candidate in Law, Associate Professor*

---

Due to the start of the Nagorno-Karabakh conflict and subsequent wars, the issues related to the social rights of servicemen and their family members, military disabled persons, and military pensioners have gained great importance and have always been under the state's care.

The article discusses the issues related to improvement of the housing conditions of servicemen, as well as providing compensation for rented living space outside the place of permanent residence. In particular, the criteria on the basis of which the need to improve housing conditions at the place of service is assessed, certain categories of a serviceperson's family members, which are taken into account when providing a serviceperson with living space or paying monetary compensation for renting living space, were discussed. In addition, in case of non-provision of an apartment to a serviceperson at the place of service, the amount of monetary compensation for renting a living space in Yerevan and the regions of the Republic of Armenia according to the composition of the family was studied.

As a result of the analysis, the shortcomings, gaps and contradictions in the legal acts regulating the relations in question were highlighted, and appropriate recommendations are made for their elimination, completion and further improvement.

**Բանալի բառեր.** զինվորական ծառայություն, զինծառայողների սոցիալական պաշտպանություն, զինծառայողների սոցիալական երաշխիքներ, զինծառայողների բնակարանային պայմանների բարելավում, զինծառայողի վարձակալած բնակելի տարածության դիմաց փոխհատուցում, զինծառայողի վարձակալած բնակելի տարածության վճար, զինծառայողի ընտանիքի անդամների կատեգորիաներ

**Ключевые слова:** военная служба, социальная защита военнослужащих, социальные гарантии военнослужащих, улучшение жилищных условий военнослужащих, компенсация военнослужащим за арендованное жилое помещение, оплата арендованной жилой площади военнослужащего, категории членов семьи военнослужащего

**Keywords:** military service, social protection of servicemen, social guarantees of servicemen, improvement of housing conditions of servicemen, compensation for rented residential space of servicemen, payment for a serviceperson's rented living space, categories of family members of serviceperson